

**ՀԵՌՈՒՄՍՍՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից հատկացված լիցենզիաների հիման վրա 2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել են 94 հեռուստաընկերություն, որից 36-ը՝ վերգետնյա եթերային, 58-ը՝ կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող և 18 ռադիոընկերություն:

Վերգետնյա եթերային 36 հեռուստաընկերություններից 6-ը հանրապետական սփյուռման են, որից 1-ը՝ վերահեռարձակում իրականացնող, 9-ը մայրաքաղաքային սփյուռման են, ներառյալ 3 վերահեռարձակում իրականացնող, 21-ը տարածքային սփյուռման են, այդ թվում 12-ը՝ տեղական հեռուստաընկերություններ (Հավելված 1):

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող 58 հեռուստաընկերություններից 14-ը գործել են Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 9-ը՝ Երևան քաղաքի, 4-ը՝ մեկից ավելի մարզերի, 31-ը՝ մեկ մարզի տարածքում (Հավելված 2):

Ռադիոձրագրերի եթերային հեռարձակում իրականացնող 18 ընկերություններից 3-ը գործել են Հայաստանի Հանրապետության, 13-ը՝ Երևան քաղաքի և 2-ը՝ մեկ մարզի տարածքում (Հավելված 3):

Բացի վերոնշյալ լիցենզավորված հեռուստառադիոընկերություններից Հայաստանի Հանրապետությունում գործել են նաև «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՍԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ, «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՍԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ, «ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՍԱՌԱԴԻՈ» ՓԲ ընկերությունները, միջպետական պայմանագրի հիման վրա վերահեռարձակվել են «ՖՄ-102.4» ֆրանսիական ռադիոձրագիրը, ինչպես նաև «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղի հեռուստառադիոձրագրերը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով պայմանավորված 2017 թվականի հունիսի 28-ին Հանձնաժողովն ընդունել է «Թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոձրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» որոշում և 2017 թվականի հունիսի 30-ի որոշմամբ հայտարարել թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոձրագրերի եթերային հեռարձակման լիցենզավորման 18 մրցույթ՝ հանրապետական, մայրաքաղաքային և մարզային սփյուռման (Հավելված 4) և 2017 թվականի հոկտեմբերի 5-ին տրամադրվել է ռադիոձրագրերի եթերային հեռարձակման 18 լիցենզիա (Հավելված 5):

Հանձնաժողովը 2017 թվականի մայիսի 2-ին հայտարարել է նաև մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ, սակայն 2017 թվականի օգոստոսի 4-ին այն հայտարարվել է չկայացած՝ սահմանված ժամկետում դիմումներ չներկայացվելու հիմքով:

Հանձնաժողովը 2017 թվականին տրամադրել է հեռուստատաղիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 18 լիցենզիա, որից 5-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 2-ը՝ Երևան քաղաքի, 3-ը՝ մի քանի մարզերի և 8-ը՝ մեկ մարզի տարածքում սփռման համար (Հավելված 6): Հաշվետու ժամանակահատվածում հեռուստատաղիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու դիմումներ չեն մերժվել:

2017 թվականին դադարեցվել է հեռուստատաղիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 14 լիցենզիա և ռադիոհաղորդումների հեռարձակման 19 լիցենզիա (Հավելված 7 և 8):

Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակում իրականացվել են նաև հետևյալ գործառույթները՝

- «ՄԻՐ» միջպետական հեռուստատաղիոծրության անխափան և անկախ գործունեության իրականացման միջազգային-իրավական երաշխիքների մասին» համաձայնագրի դրույթները ապահովելու նպատակով «ՄԻՐ» միջպետական հեռուստատաղիոծրության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղին Երևան քաղաքի տարածքում ռադիոծրագրի հեռարձակում իրականացնելու համար տրամադրվել է հաճախականություն.

- տրվել է բաժանորդային հեռարձակման մեկ թույլտվություն.
- իրականացվել են լիցենզիաների վերաձևակերպումներ:

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող ընկերություններին ոչ սեփական և սեփական հեռուստատաղիոծրագրերի վերահեռարձակման և հեռարձակման թույլտվություն տալու գործառույթի շրջանակում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ավելի քան 380 պայմանագրեր և հեռարձակման իրավունքը հավաստող այլ փաստաթղթեր, ստուգվել է դրանց համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Արդյունքում կայացվել է ոչ սեփական և սեփական հեռուստատաղիոծրագրերի վերահեռարձակման և հեռարձակման թույլտվություն տալու 55 որոշում:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները հաշվետու ժամանակահատվածում ապահովել են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ հեռուստատաղիոծրագրերի հեռարձակման համար տարեկան պետական տուրքի, սահմանված ժամկետում չվճարված տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժի, ռադիոծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթների մասնակցության, ինչպես նաև լիցենզիաների վերաձևակերպումների համար գանձված գումարների հաշվին: 2017 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է 122 393 363 (հարյուր քսաներկու միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, այդ թվում՝ 751 182 (յոթ հարյուր հիսունմեկ հազար հարյուր ութանասուներկու) ՀՀ դրամ տույժ:

2017 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով կատարել է հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստատաղիոծրությունների ծրագրերի 2100 և տարածքային սփռում իրականացնող հեռուստատաղիոծրությունների 1860 օրերի ուղղակի դիտարկումներ:

Հանձնաժողովը ստացել և ուսումնասիրել է հեռուստատառադիոընկերությունների հաշվառման մատյանների տվյալները, վարել է դրանց տեղեկատվական բազան, իրականացրել է իր ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում, ինչպես նաև հեռուստատառադիոծրագրերի հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի, Հանձնաժողովը մշակել և իր 2017 թվականի հունվարի 18-ի թիվ 3-Ա որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը»:

2017թ. մարտի 5-ից մինչև ապրիլի 2-ը Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող թվով 31 հեռուստաընկերությունների և 13 ռադիոընկերությունների ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Նշված ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստատառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ավելի քան 5280 եթերաժամ, որից 3720 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում, իսկ 1560 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում, ինչի արդյունքում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

2017թ. մարտի 5-ից մինչև ապրիլի 2-ը ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովը պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի, Հանձնաժողովը մշակել և իր 2017 թվականի մարտի 7-ի թիվ 12-Ա որոշմամբ հաստատել է «Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը»:

2017թ. ապրիլի 5-ից մինչև մայիսի 14-ը Հանձնաժողովն իրականացրել է գործող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող թվով 12 հեռուստաընկերությունների և 10 ռադիոընկերությունների ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Հեռուստատեսության և ռադիոյի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Նշված ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ավելի քան 3120 եթերաժամ, որից 1680 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում և 1440 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում, ինչի արդյունքում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

2017թ. ապրիլի 5-ից մինչև մայիսի 14-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողով պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել:

2017 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի դեմ դատական վարույթներ չեն հարուցվել:

Հանձնաժողովի կողմից հարուցվել է երկու վարչական վարույթ՝ «Գովազդի մասին» ՀՀ օրենքը խախտելու և ընտրությունների ժամանակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջը խախտելու վերաբերյալ, որոնք Հանձնաժողովի որոշմամբ կարճվել են:

2017 թվականին Հանձնաժողովը մասնակցել է Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA) 45-րդ (գարնանային) և 46-րդ (աշնանային) նստաշրջաններին, ինչպես նաև Սևծովյան տնտեսական համագործակցության հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների ֆորումի (BRAAF) 8-րդ տարեկան հանդիպմանը: Հանձնաժողովը մասնակցել է նաև Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից կազմակերպված համաժողովին:

2017 թվականի դեկտեմբերին Հանձնաժողովը, Եվրոպայի խորհրդի հրավերով, մասնակցել է վերջինիս կողմից Բուդապեշտ քաղաքում կազմակերպված տարածաշրջանային համաժողովին՝ «Ազգային պառլամենտների դերը մեդիայի անկախության և բազմակարծության խթանման հարցում» թեմայով:

Հանձնաժողովը համագործակցել է նաև Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ: Այս համագործակցության շրջանակներում 2017 թվականի դեկտեմբերի 25-ին Հանձնաժողովը և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը հաստատել են 2018 թվականի համատեղ աշխատանքային ծրագիրը: Նշված համագործակցության շրջանակում ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովից 2017թ.

ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Հանձնաժողով են գործուղվել

որակավորված աշխատակիցներ, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակիցներ գործուղվել են ԼՂՀ՝ Սահմանադրության հանրաքվեի նախընտրական քարոզչության ժամանակ:

Հանձնաժողովը համագործակցել է հայաստանյան հասարակական և միջազգային մի շարք կազմակերպությունների հետ:

Հանձնաժողովն իրականացրել է իր գործունեության հետ առնչվող հարցերի լուսաբանումը հասարակայնության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, ինչպես նաև նորությունների մասին տեղեկատվության տեղադրումը Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

2017 թվականի ընթացքում Հանձնաժողովը գումարել է 35 նիստ, որում ընդունվել է 117 անհատական որոշում:

Հանձնաժողով մուտքագրվել է 846 գրություն ՀՀ քաղաքացիներից և կազմակերպություններից՝ 36 դիմում-բողոք (հեռուստաընկերությունների հաղորդումների անորակ լինելու, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու և այլն), որոնց պատասխանվել է համաձայն գործող օրենսդրական ակտերին:

Հանձնաժողովն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ օրենքների, որոշումների, միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի 95 նախագծերի:

2017թ. ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմն անցկացրել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար 1 մրցույթ և 10 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը, հեռուստաձրագրի անվանումը	Սփյուռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	-
2	«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	-
3	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 151 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ «h2» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 152 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 157 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 163 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 164 20.01.2011թ. 20.01.2021թ.

8	«ԱՆՍՎԵՐ» ՍՊԸ «ԷՌ ՏԷ ԷՌ ՊԼԱՆԵՏԱ» (PTP планета) ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 171 28.01.2011թ. 20.01.2021թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ՄԻՐ» միջպետական հեռուստատաղիորնկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաձյուղ «ՄԻՐ» ՀԾ	ք. Երևան	–
2	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱՐ» ՀԾ	ք. Երևան	N 148 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ «ԱՐՄՆՅՈՒԶ» ՀԾ	ք. Երևան	N 153 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀՅ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՀՅ» ՀԾ	ք. Երևան	N 156 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՐԿ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ» ՀԾ	ք. Երևան	N 160 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «21 ԹԻՎԻ» (21 TV) ՀԾ	ք. Երևան	N 161 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ԱՌԱԶԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ «ՄԻ ԷՆ ԷՆ» (CNN) ՀԾ	ք. Երևան	N 162 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ «Ա-ԹԻՎԻ» ՀԾ	ք. Երևան	N 166 20.01.2011թ. 20.01.2021թ.

9	«ԱԴՎԵՐՏԱ» ՍՊԸ «ՊԵՐՎԻՅ ԿԱՆԱԼ» (Первый канал) ՀԾ	ք. Երևան	N 170 28.01.2011թ. 20.01.2021թ.
10	«ՊԱՐԱԴԻՉ» ՍՊԸ «ԿՈՒԼՏՈՒՐԱ» (Культура) ՀԾ	ք. Երևան	N 172 28.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՆՏԻ ՄԱՐԶ			
1	«ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԱՐԱԳԱԾ» ՀԾ	ՀՀ Արագածոտնի մարզ	N 167 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐԱՐՄՏԻ ՄԱՐԶ			
1	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ «ԱՐԱՐՄՏ» ՀԾ	ՀՀ Արարատի մարզ	N 168 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ «ԼՈՒՅՍ» ՀԾ	ՀՀ Արմավիրի մարզ	N 158 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԷԶՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ «ԱՎԵՏԻՍ» ՀԾ	ք. Էջմիածին	N 43 12.04.2002 թ.*
3	«ԹԵՎ» ՍՊԸ «ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԾ	ք. Արմավիր	N 47 18.04.2002 թ.*
4	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԼՏ» ՀԾ	ք. Արմավիր	N 49 18.04.2002 թ.*
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԳԵՂԱՄԱ» ՀԾ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 149 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶ			
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	N 150

	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՀԾ		20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ «ՎԱՆԱԶՈՐ» ՀԾ	ք. Վանաձոր	N 48 18.04.2002 թ.-*
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ՀԾ	ք. Վանաձոր	N 58 03.07.2002 թ.-*
4	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՀԾ	ք. Ալավերդի	N 79 25.10.2003 թ.-*
5	«ԼՈՌԻ ԹԻՎԻ» ՍՊԸ «ԼՈՌԻ» ՀԾ	ք. Վանաձոր	N 83 01.11.2003 թ.-*
6	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ «ՍԼԱՎ ՄԵԴԻԱ» ՀԾ	ք. Սպիտակ	N 97 22.02.2005 թ.-*
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ «ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՀԾ	ՀՀ Կոտայքի մարզ	N 154 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՄԻՐԱԿ» ՍՊԸ «ՀՐԱԶԴԱՆ ԹԻՎԻ» ՀԾ	ք. Հրազդան	N 89 12.01.2004 թ.-*
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ «Շ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՑԱՅԳ» ՍՊԸ «ՑԱՅԳ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	N 165 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ «ԳԱԼԱ» ՀԾ	ք. Գյումրի	N 98 23.02.2005 թ.- *
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՁԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ «ՍՈՍԻ» ՀԾ	ՀՀ Սյունիքի մարզ	N 169 20.01.2011թ. 20.01.2021թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶ			
–	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍՊԸ «ՏԱՎՈՒՇ» ՀԾ	ՀՀ Տավուշի մարզ	N 159 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ «ՔԱՄՈՒՏ» ՀԾ	ք. Նոյեմբերյան	N 81 01.11.2003 թ.*
3	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ «ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՀԾ	ք. Իջևան	N 85 06.11.2003 թ.*

* Նշված լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև յուրաքանչյուր լիցենզիայով սահմանված սփոման տարածքը ներառող մարզում թվային հեռարձակման նոր մրցույթի անցկացումը և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ)

ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
Ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՍ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N144 23.10.2010թ. 23.10.2020թ.
2	«ՅՈՒՔՈՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N186 16.10.2012թ. 16.10.2022թ.
3	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N187 06.11.2012թ. 06.11.2022թ.
4	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի մարզ, Կոտայքի մարզ	N195 15.04.2014թ. 15.04.2024թ.
5	«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ, Վայոց ձորի մարզ	N 202 01.04.2015թ. 01.04.2025թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	N 205 16.09.2015թ. 16.09.2025թ.
7	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 208 24.11.2015թ.

			24.11.2025թ.
8	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 211 23.03.2016թ. 23.03.2026թ.
9	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 216 30.12.2016թ. 30.12.2026թ.
10	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 218 14.01.2017թ. 14.01.2027թ.
11	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի մարզ, Սյունիքի մարզ	N228 03.10.2017թ. 03.10.2027թ.
12	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի մարզ, Լոռու մարզ	N229 03.10.2017թ. 03.10.2027թ.
13	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N252 22.12.2017թ. 22.12.2027թ.
14	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր	N 253 23.12.2017թ. 23.12.2027թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան	N137 20.03.2010թ. 20.03.2020թ.
2	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N140 26.05.2010թ.

			26.05.2020թ.
3	«ՍՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ք. Երևան	N146 23.12.2010թ. 23.12.2020թ.
4	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N174 10.06.2011թ. 10.06.2021թ.
5	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N184 15.06.2012թ. 15.06.2022թ.
6	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	N 185 16.06.2012 թ. 16.06.2022 թ.
7	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	N 203 07.07.2015 թ. 07.07.2025 թ.
8	«ԻՆՔՈՍ» ՍՊԸ	ք. Երևան	N 210 30.12.2015 թ. 30.12.2025 թ.
9	«ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 249 17.11.2017թ. 17.11.2027թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՊՐՈՂԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N 194 11.01.2014թ. 11.01.2024թ.
2	«ՈՒԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	N 225 17.09.2017թ. 17.09.2027թ.

3	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՅԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N 248 16.11.2017թ. 16.11.2027թ.
4	«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Տավուշի մարզ	N 251 15.12.2017թ. 15.12.2027թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	N 147 23.12.2010թ. 23.12.2020թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N 183 22.05.2012թ. 22.05.2022թ.
2	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	N 181 31.01.2012թ. 31.01.2022թ.
3	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	ք. Մասիս	N 178 09.08.2011թ. 09.08.2021թ.
4	«ԿԻՄ-ՌԱՅ » ՍՊԸ	ք. Մասիս	N 207 09.11.2015թ. 09.11.2025թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր	N 138 23.03.2010թ. 23.03.2020թ.
2	«ՀԱՈՒԶ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	N 221 29.07.2017թ. 29.07.2027թ.

3	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N 250 21.11.2017թ. 21.11.2027թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	N 133 07.04.2009թ. 07.04.2019թ.
2	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	ք. Գավառ	N 136 22.12.2009թ. 22.12.2019թ.
3	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ. 28.12.2022թ.
4	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 219 04.07.2017թ. 04.07.2027թ.
5	«ՍԱՄՈՒՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	N 226 28.09.2017թ. 28.09.2027թ.
ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶ			
1	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍԵՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 145 23.12.2010թ. 23.12.2020թ.
2	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	N 206 09.11.2015թ. 09.11.2025թ.
3	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 212 05.04.2016թ. 05.04.2026թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			

1	«ՊԼԱՆԵՏ ԲԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	N 177 04.08.2011թ. 04.08.2021թ.
2	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 197 20.08.2014թ. 20.08.2024թ.
3	«ՍՄԱՅԼ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 198 06.09.2014 թ. 06.09.2024 թ.
4	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ք. Նոր Հաճրն	N 214 09.07.2016թ. 09.07.2026թ.
5	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 220 25.07.2017թ. 25.07.2027թ.
6	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	N 223 03.08.2017թ. 03.08.2027թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N 182 18.05.2012թ. 18.05.2022թ.
2	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	N 175 09.07.2011թ. 09.07.2021թ.
3	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N 222 02.08.2017թ. 02.08.2027թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 199

			09.10.2014թ. 09.10.2024թ.
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 201 24.03.2015թ. 24.03.2025թ.
3	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Միսիան	N 209 29.12.2015թ. 29.12.2025թ.
4	«ԽՈՅԼՈՒՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	N 213 09.07.2016թ. 09.07.2026թ.
5	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	N 215 21.12.2016թ. 21.12.2026թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
-	-	-	-
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N 227 30.09.2017թ. 30.09.2027թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը, ռադիոձրագրի անվանումը	Միջմասն տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի առաջին ծրագիր «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ»	Հայաստանի Հանրապետություն	-
2	«ՌԱԴԻՈ ՂՌՈ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԶԱՆ» ռադիոձրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 230 06.10.2017թ. 06.10.2027թ.
3	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոձրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 231 06.10.2017թ. 06.10.2027թ.
4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոձրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 232 06.10.2017թ. 06.10.2027թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր «ԻՄ ՌԱԴԻՈ»	ք. Երևան	-
2	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՎԷՄ» հոգևոր-մշակութային ռադիոձրագիր	ք. Երևան	-

3	«ՖՄ-102.4» ֆրանսիական ռադիոծրագիր	ք. Երևան	-
4	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» ռադիոծրագիր	ք. Երևան	-
5	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ «ԱՎՏՈՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 233 06.10.2017թ. 06.10.2027թ.
6	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 234 06.10.2017թ. 06.10.2027թ.
7	«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 235 06.10.2017թ. 06.10.2027թ.
8	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 236 06.10.2017թ. 06.10.2027թ.
9	«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ «ՋԱՋ ԷՖ ԷՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 237 06.10.2017թ. 06.10.2027թ.
10	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ «ԻՄՊՈՒԼՍ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 238 06.10.2017թ. 06.10.2027թ.
11	«ՖՄ-105.5» ՍՊԸ «ՀԱՅ ՖՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 239 06.10.2017թ. 06.10.2027թ.
12	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ «ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 240 06.10.2017թ. 06.10.2027թ.

13	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ «ՎԱՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 241 06.10.2017թ. 06.10.2027թ.
14	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 242 06.10.2017թ. 06.10.2027թ.
15	«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ «ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 243 06.10.2017թ. 06.10.2027թ.
16	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 244 06.10.2017թ. 06.10.2027թ.
17	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ «ԼԱՎ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 245 06.10.2017թ. 06.10.2027թ.
ՄԵԿ ՄԱՐԶ			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ Շիրակի հանրային ռադիոծրագիր	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ռադիոծրագիր	ՀՀ Շիրակի մարզ	N 246 06.10.2017թ. 06.10.2027թ.
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ռադիոծրագիր	ՀՀ Լոռու մարզ	N 247 06.10.2017թ. 06.10.2027թ.

ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՑԱՆՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԹԻՎ 1-18 ՄՐՑՈՒՑԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցույթի հայտարարում	Տեղեկատվության հրատարակում	Հայտերի ընթրման ժամանակահատվածը	Մրցույթի հերթական համարը	Ռադիոծրագրի սվիտման տարածքը	Ռադիո ծրագրի թեմատիկ ուղղվածությունը	Մրցույթի մասնակցի և հաղթող ընկերության անվանումը	Հայտի և կից փաստաթղթերի հրատարակում	Հաղթող ճանաչելու մասին որոշման ընթրում
2017 թվականի հունիսի 30-ին	2017 թվականի հուլիսի 27-ին	2017 թվականի հունիսի 28-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 5-ը ներառյալ	թիվ 1	Հայաստանի Հանրապետություն	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ	2017 թվականի սեպտեմբերի 15-ին	2017 թվականի սեպտեմբերի 26-ին
			թիվ 2	Հայաստանի Հանրապետություն	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ		
			թիվ 3	Հայաստանի Հանրապետություն	ընդհանուր	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ		
			թիվ 4	ք. Երևան	Ժամանցային	«ԱՎՏՈՌՌԱԴԻՈ» ՍՊԸ		
			թիվ 5	ք. Երևան	Երիտասարդական	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ		
			թիվ 6	ք. Երևան	Երաժշտական	«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ		
			թիվ 7	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ		
			թիվ 8	ք. Երևան	ընդհանուր	«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ		
			թիվ 9	ք. Երևան	ընդհանուր	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ		
			թիվ 10	ք. Երևան	ընդհանուր	«ՖՄ-105.5» ՍՊԸ		
			թիվ 11	ք. Երևան	ընդհանուր	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈՆԿԵ ԲՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ		
			թիվ 12	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ		
			թիվ 13	ք. Երևան	ընդհանուր	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ		
			թիվ 14	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ		
			թիվ 15	ք. Երևան	ընդհանուր	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ		

			թիվ 16	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ		
			թիվ 17	ՀՀ Շիրակի մարզ	ընդհանուր	«ՇԱՆԹ» ՍՊԸ		
			թիվ 18	ՀՀ Լոռու մարզ	ընդհանուր	«ԼՈՌՈՒՄ ՄԻԳ» ՍՊԸ		

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱՐԻՎԱԾ ՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ

ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, սրման ամսաթիվը
1	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 50-Ա որոշում	N 230 05.10.2017թ.
2	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 51-Ա որոշում	N 231 05.10.2017թ.
3	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐ ՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 52-Ա որոշում	N 232 05.10.2017թ.
4	«ԱՎՏՈՌՌԱԴԻՈ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 53-Ա որոշում	N 233 05.10.2017թ.
5	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 54-Ա որոշում	N 234 05.10.2017թ.
6	«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 55-Ա որոշում	N 235 05.10.2017թ.
7	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 56-Ա որոշում	N 236 05.10.2017թ.
8	«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 57-Ա որոշում	N 237 05.10.2017թ.
9	«ԻՄՊՈԻԼՍ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 58-Ա որոշում	N 238 05.10.2017թ.

10	«ՖՄ- 105.5» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 59-Ա որոշում	N 239 05.10.2017թ.
11	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 60-Ա որոշում	N 240 05.10.2017թ.
12	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 61-Ա որոշում	N 241 05.10.2017թ.
13	«ՔԻՍՍ ԷՖ ԷՍ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 62-Ա որոշում	N 242 05.10.2017թ.
14	«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 63-Ա որոշում	N 243 05.10.2017թ.
15	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 64-Ա որոշում	N 244 05.10.2017թ.
16	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 65-Ա որոշում	N 245 05.10.2017թ.
17	«ՇԱՆԹ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 66-Ա որոշում	N 246 05.10.2017թ.
18	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ՀՌԱՀ 26.09.2017թ. թիվ 67-Ա որոշում	N 247 05.10.2017թ.

Հավելված 6

*Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի 2017 թվականի հաղորդման*

**2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ
(ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը
1	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 28.12.2016թ. թիվ 75-Ա որոշում	N 218 13.01.2017թ.
2	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	ՀՌԱՀ 30.06.2017թ. թիվ 31-Ա որոշում	N 219 03.07.2017թ.
3	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 17.07.2017թ. թիվ 32-Ա որոշում	N 220 24.07.2017թ.
4	«ՀԱՈՒԶ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	ՀՌԱՀ 27.07.2017թ. թիվ 37-Ա որոշում	N 221 28.07.2017թ.
5	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	ՀՌԱՀ 27.07.2017թ. թիվ 35-Ա որոշում	N 222 01.08.2017թ.
6	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	ՀՌԱՀ 27.07.2017թ. թիվ 36-Ա որոշում	N 223 02.08.2017թ.
7	«ԱՎՐՈՐԱ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 04.08.2017թ. թիվ 40-Ա որոշում	N 224 22.08.2017թ.
8	«ՈՒԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	ՀՌԱՀ 22.09.2017թ. թիվ 44-Ա որոշում	N 225 26.09.2017թ.
9	«ՄԱՄՈՒՏ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	ՀՌԱՀ 22.09.2017թ. թիվ 46-Ա որոշում	N 226 27.09.2017թ.
10	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	ՀՌԱՀ 22.09.2017թ. թիվ 45-Ա որոշում	N 227 29.09.2017թ.
11	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի մարզ, Սյունիքի	ՀՌԱՀ 22.09.2017թ.	N 228

		մարզ	թիվ 47-Ա որոշում	02.10.2017թ.
12	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի մարզ, Լոռու մարզ	ՀՌԱՀ 22.09.2017թ. թիվ 48-Ա որոշում	N 229 02.10.2017թ.
13	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	ՀՌԱՀ 10.11.2017թ. թիվ 108-Ա որոշում	N 248 15.11.2017թ.
14	«ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 10.11.2017թ. թիվ 106-Ա որոշում	N 249 16.11.2017թ.
15	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	ՀՌԱՀ 10.11.2017թ. թիվ 107-Ա որոշում	N 250 20.11.2017թ.
16	«ԿՈՒՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Տավուշի մարզ	ՀՌԱՀ 04.12.2017թ. թիվ 113-Ա որոշում	N 251 14.12.2017թ.
17	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 04.12.2017թ. թիվ 112-Ա որոշում	N 252 21.12.2017թ.
18	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր	ՀՌԱՀ 04.12.2017թ. թիվ 114-Ա որոշում	N 253 22.12.2017թ.

Հավելված 7

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017 թվականի հաղորդման

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը	Լիցենզիայի համարը, սփյուռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը
1	«ՖԼԱՅ ՏՎ» ՍՊԸ	Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N196 ք. Գյումրի	ՀՌԱՀ 25.04.2017թ. թիվ 18-Ա որոշում
2	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N176 ք. Նոր Հաճրն	ՀՌԱՀ 17.07.2017թ. թիվ 32-Ա որոշում
3	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N141 ք. Երևան	ՀՌԱՀ 22.09.2017թ. թիվ 47-Ա որոշում
4	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N179 ք. Երևան	ՀՌԱՀ 22.09.2017թ. թիվ 48-Ա որոշում
5	«ԱՎՐՈՐԱ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N224 ք. Երևան	ՀՌԱՀ 17.11.2017թ. թիվ 111-Ա որոշում
6	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N217 ք. Երևան, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի մարզեր	ՀՌԱՀ 04.12.2017թ. թիվ 114-Ա որոշում

Հավելված 8

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017 թվականի հաղորդման

**2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը	Լիցենզիայի համարը, սփռման տարածքը
1	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N122 ք. Գյումրի
2	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N125 ք. Հրազդան
3	«ՍԱՍՈՒ-ՏՎ» ՍՊԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N126 ք. Սևան
4	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N127 ք. Այրում
5	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N128 ք. Չարենցավան
6	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N129 ք. Երևան
7	«ԹԵՎ» ՍՊԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N130 ք. Արմավիր, ք. Մեծամոր
8	«ՎԻԳԵԴՈ» ՓԲԸ	Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N131 Հայաստանի Հանրապետություն
9	«ՖՄ-105.5» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 61 ք. Երևան

10	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 51 ք. Երևան
11	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 92 ք. Երևան
12	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 55 ք. Երևան
13	«ԱՐՁԱԳԱՆՔ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 42 ք. Երևան
14	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 52 ք. Երևան
15	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 72 ք. Երևան
16	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 56 ք. Երևան
17	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 50 ք. Երևան
18	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 87 ք. Վանաձոր
19	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 108 մարզեր
20	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 95 ք. Երևան
21	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 101 ք. Երևան
22	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 100 մարզեր
23	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ	Ռադիոծրագրի եթերային հեռարձակում	N 99 մարզեր

24	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	Ռադիոձրագրի եթերային հեռարձակում	N 110 ք. Ծաղկահովիտ
25	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ	Ռադիոձրագրի եթերային հեռարձակում	N 116 ք. Երևան
26	«ՈՒԼԻՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Ռադիոձրագրի եթերային հեռարձակում	N 117 ք. Երևան
27	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Ռադիոձրագրի եթերային հեռարձակում	N 65 ք. Գյումրի